Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 189-րդ, 191-րդ, 192-րդ, 234.5-րդ հոդվածներով՝ Դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

Հայցը բավարարել.

Ոչ իրավաչափ ճանաչել «Վանաձորի Հովհաննես Աբեյանի անվան պետական դրամատիկական թատրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության՝ թիվ ՊԴԹ-ՄԱԱՇՁԲ-22/17 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2022 թվականի դեկտեմբերի 05-ին կնքված թիվ ՊԴԹ-ՄԱԱՇՁԲ-22/17 պայմանագիրը միակողմանի լուծելը:

«Վանաձորի Հովհաննես Աբեյանի անվան պետական դրամատիկական թատրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունից հօգուտ «ՍՏ ԱՐՏ» ՍՊ ընկերության բռնագանձել 60.000 ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար, իսկ մնացած մասով՝ մերժել:

«Վանաձորի Հովհաննես Աբեյանի անվան պետական դրամատիկական թատրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունից հօգուտ «ՍՏ ԱՐՏ» ՍՊ ընկերության բռնագանձել 30.000 ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Վճիռը կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակելու օրվանից մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ՝ **Հ. ՋԱԼԱԼՅԱՆ**

Ծանոթություն: Սույն վճռի դեմ վերաքննիչ բողոք չի ներկայացվել, և վճիռը մտել է օրինական ուժի մեջ _____2023 թվականին:

ԴԱՏԱՎՈՐ՝ **Հ. ՋԱԼԱԼՅԱՆ**